

Ի ՅԻՇԱՏԱԿՍ ՔԱԶԱՅ ՄՇԱԿԱՑՆ

ԽՕՍԻ Է. Ն. ԱԿԻՆԵԱՆԻ

Առ սրնարօքրն Մասեաց արկ Տէր այգի նորատունկ,
Զորով որմունս շրջափակ ածին նորին իսկ մատունի:
Զհոգս դարմանոց յանձն արար ի մըշակացն դաստակս,
Ամ ըստ ամէ առօգել զիւր վայելուչ անդաստակս:

Անեաց այգին ի ծաղիկս, ի բազմաբեր արգասիս.
Եւ հունձի ածան ի պահեստ յամրածածուկ կարասիս:
Ընդ տոհմականսն ցրնծացին Տէր եւ Մըշակի միասին,
Իսկ ի վայելս մըքերաց քոռունի նոցին իսկ հասին:

Զաւանդս հարանցն յարգեցին որդոց յորդիս պայագատի,
Վըկայի նըգանց եւ գործոց արձանի նոցին հարագատի.
Թողին գարդիւնս վաստակոց բագում դարուց եւ ամաց,
Զոր ժամանակն մըտադիւր յանյագ ի ծոց իւր ամաց:

Թէ սուգակացն արուեստ՝ անդնդապտոյտ ի յատակս
Զունջըս ծովուց պեղիցէ յայտնել գամացն յիշատակս,
Զի՞ իսկ, որդիդ հարագատ, ի մըքանացն կասիս,
Ընդ ժամանակսն քափանցանց՝ որսալ ըզհարցդ արգասիս:

Միտք որ ի մարգս եւ յեղտիւրս որոնէ իւր ըզբօսանս,
Գըտցէ գիւհոյսն առանձին ի պատմութեանն ջինջ հոսանս.
Ուր դարք ըզդարս հալածեն, գան վէպք ազգաց ի հանդէս,
Անդ եւ հաւուցդ յիշատակի երեւեսցին ինք յանդէս:

Ի քեւս քեքեւս ընդ այերս առին շրջանս յիշատակի,
Զորոց գընթացսն կարնել ժանիք դարուց չեն առակի:
Նըվիրական յիշատակի նահապետացն որ անցին,
Բարձեալ բերեն զնոցին գարուքեանց գործս ըստ անձին:

Ո՞յր ձեռն տընկեաց գայգին մեր մատաղատունկ ի դաշտի,
Յորոյ բերոցն փըրփրադէգ անապականն մեզ պաշտի:
Կէսք ի սահմանս քաջանուն, հաւատարիմ ի վառ դից,
Կէսք ի մըտաց բուրաստանս կապեցին փունջս ի վարդից:

Օրինակարն քաջաց սընան որդիք եւ քոռունի,
Զորոց բագուկս ընկնեցին ոչ սարիք պինդ, ոչ տոռունի,
Հակատակացն դիմագրաւ կացին ամուրբն անառիկ,
Եւ քըշնամեացն բանակին վատնեցան հոյլք անարիք:

Արիւնք քաջացն եռացին, տըկարք առին քաջալերս,
Շեփորն մարտին տայր հրաւեր, շոխնոն գամուրսն տապալեր:
Անդ Հայկն արի եւ Տիգրան եւ Տըրդատէս կաշըմբունն,
Սահակ, Մաշտոց, Ներսիսեանք ետուն միմեանց ըզհամբոյրն:

Ժամանակացն անիւ քէպէտ գերկիրն գայն վարուն,
Արօրադիր աւերեաց, գոր գարդարեացն գարուն,
Թէպէտ հրոսաց ասպատակի, քագաւորացն արհաւիրք
Կալան գերկիրն գայն բընիկ, ի հուր, ի սուր եւ ի վիրգ:

Այլ ընդ լըծով նըլանել զնոցին հայկեան ընդոծին,
Ոչ բաւեցին զէնք եւ գարդիք եւ ոչ բըռունիք իսկ նոցին:
Հայոց լեռանցն կատարք յօդեալ ի կայծ եւ յակատ,
Զուր ընդհարան ընդ նոսա մըրրիկիք եւ բուքք ի հակատ:

Որ քաջ արանցդ պայագատ լինել յանձին դու պարծիս,
Լեր ուշակալ, զի արդեամբք եւ ոչ յունայն ի կարծիս,
Լիցիս գործոցն ժառանգորդ, մեծի անուանն արժանի.
Նահատակաց, ոչ արեան, պըսակ փառաց բարձանի:

Ըզյիշատակս Մըշակացդ եւ ըզվաստակս Անուանեաց,
Զոր ժամանակն վաղ ի մէնջ ի մոռացօնըս վանեաց,
Երգէ Հ ա ն դ է ս Ա մ ս օ բ ե ա յ ի դըրուատիս իսկ նոցին,
Զորս եւ գըքով փայփայեաց ի մայրենի յիւր ծոցին:

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, Ի ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ Ի ՎԻԵՆՆԱ

Հոկտեմբեր 3 Յորեւեանի տօնախմբութեան կիրակին էր.
Միւլիթարեանց Հանդիսասրահը տօնազարդուած էր օրուան վայե-
լուչ կահաւորումով: «Հանդէս Ամսօրեայ»-ի յիսուն հատորները
բազմած էին փառաշուք ոսկի կազմով. Ազգային Մատենադարանի
հարիւր քառասուն ու երեք հատորներն եւս իբր շքադիր զետե-
ղուած էին անոնց շուրջ: Գերպ. Հ. Արսէն Այտընեանի պղնձէ կի-
սանդրին կը նախագահէր այդ շքախումբին: Մեծ Հանճարին ու
«Հանդէս Ամսօրեայ»-ի երջանիկ Հիմնադրին խորթափանց աչքերը
կարծես կենդանացած էին այդ փառքի օրը ելեկարական լոյսերու
շողին տակ. անոր բոց աղնարկները կը դիտէին ժողովուրդը տպա-
ւորիչ խորհրդաւորութեամբ:

Ժամը 5 էր յետ միջօրէի. արդէն լեցուած էր սրահը հայ եւ
օտար հիւրերով: Յորեւեանը իրենց ներկայութեամբ կը պատուէին
Գերպ. Հ. Սահակ Վ. Կոզեան, առաջնորդ Կաթ. Հայոց Ռուսմանիոյ
եւ Պատգամաւոր Ռուսմանայ մտաւորականութեան. Պր. Առա-
քել Սարուխան, յիսնամեայ աշխատակից «Հանդէս Ամսօրեայ»-ի,
Ուսուցչապետ Hofrat Hans von Mzik, դասախօս հայերէն լեզուի
Վիեննայի Համալսարանին մէջ, Prof. Dr. B. Geiger, Ուսուցչապետ
երանեան լեզուներու, Prof. Zederbauer՝ Հողագործական Համալ-
սարանէն, Univ.-Doz. Dr. R. Bleichsteiner, ուսուցիչ վրացերէն լեզուի
(Վիեննայի Համալսարանէն), մեծ թիւով գերման վարժարաննե-
րու ուսուցիչներ ու համալսարանականներ: Տեղւոյ հայ գաղութը
եւս զրեթէ լիաթիւ փութացած էր ներկայ գտնուիլ:

Ու ահա Միւլիթարեանց երգչախումբը զեկավարութեամբ
Հ. Մ. Վ. Սրապեանի ձայնեց անմահ Կոմիտասի «Սարէն ելաւ»:
Հազար ծափերը լուցին Նախագահը՝ Գերպ. Հ. Մեսրոպ Վ. Հա-
պոզեան, Ընդհանր. Աբբայ Միւլիթարեանց, բացաւ Հանդէսը ու
կուռ խօսքերով պարզեց օրուան նշանակութիւնը: Հ. Պօղոս Էսա-
պալեան ոգեւոր շեշտով արտասանեց ձօն մը «Հանդէս Ամսօ-
րեայ»-ին: Յետոյ բեմ բարձրացաւ թերթիս Խմբագրապետը՝
Հ. Ներսէս Վ. Ակինեան ու ներկայացուց Ուսումնաթերթիս յիս-
նամեայ գործունէութիւնը: Իրմէ ետք խօսք առաւ Դկտ. Հ. Վա-
սական արդիւնքը: Գնահատանքի խօսքեր խօսեցան Prof. Dr. H.
v. Mzik (գերմ.), St. Lyonnet S. J. (գաղղ.): խօսք առին նաեւ Պր. Ա.
Սարուխան (գաղղ.), Տ. Ներսէս Վ. Սայեղեան ու Տ. Եղիշէ քհն.
Իւթիւճեան: Կարգացուեցան Ուղերձ մը Դկտ. Վ. Թորգոմեանէ,
չնորհաւորական նամակներ ու հեռագիրներ. յայտարարուեցան
նաեւ Ուսումնաթերթիս ազնիւ բարերարներու անունները, որոնք
այս առթիւ փութացուցած էին իրենց նուէրները: Ի վերջ հանդի-